ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Պարույր Սևակի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (10 դասաժամ),անգլերենի (8) ,ՆԶՊ (կես դրույք),քիմիայի (3), կենսաբանության (5), ֆիզիկայի (4), բնագիտության (3), տեխնոլոգիայի (2,աղջիկների խումբ), ֆիզկուլտուրայի (12) , ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է(Ձև 1),
2. Փաստաթուղթ(դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն(Ձև4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի,հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

ՆԶՊ-ի ուսուցչի մրցույթին մասնակցողը պարտադիր պիտի ունենա պահեստազորի սպայի կոչում և տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրված տեղեկանք կամ ուղեգիր:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 3-ին՝ ժամը 15:00-ին, Արարատի մարզի գյուղ Տիգրանաշենի հիմնական դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 88-00-93 հեռախոսահամարով: